

"ԵԿ" ՄԱԿՆԻՇԻ ԳԾԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱՑՈՒՑԱԿ




Էլեմենտի մակնիշը	Անվանում	Թերթի մակնիշը	Ծանոթ.
1	Ընդհանուր տվյալներ	ԵԿ-1	
2	Հիմքերի դասավորության սխեմա	ԵԿ-2	
3	Հիմքեր ՀՀ-1,ՀՀ-2,ՀՀ-3 մասնագիր	ԵԿ-3	
4	Դիաֆրագմաների դասավորության սխեմա	ԵԿ-4	
5	Դիաֆրագմա Դմ-1	ԵԿ-5	
6	Դիաֆրագմա Դմ-2	ԵԿ-6	
7	Դիաֆրագմա Դմ-3	ԵԿ-7	
8	Դիաֆրագմա Դմ-4	ԵԿ-8	
9	Դիաֆրագմա Դմ-5	ԵԿ-9	
10	Դիաֆրագմա Դմ-6	ԵԿ-10	
11	Դիաֆրագմա Դմ-7	ԵԿ-11	
12	Դիաֆրագմա Դմ-8	ԵԿ-12	
13	Դիաֆրագմա Դմ-9	ԵԿ-13	
14	Դիաֆրագմա Դմ-10	ԵԿ-14	
15	Հանգույց «Ա»	ԵԿ-15	
16	Մասնագիր	ԵԿ-16	
17	Մասնագիր	ԵԿ-17	
18	Մասնագիր	ԵԿ-18	
19	Մասնագիր	ԵԿ-19	
20	Շրջանակ ՇՐմ-1	ԵԿ-20	
21	Շրջանակ ՇՐմ-1, մասնագիր	ԵԿ-21	
22	Միջհարկային ծածկի սալերի ուժեղացման հատակագիծ	ԵԿ-22	
23	Վերնածածկի սալերի ուժեղացման հատակագիծ Մ1:150	ԵԿ-23	
24	Վերնածածկի սալերի ուժեղացման հատակագիծ Մ1:150	ԵԿ-24	
25	Գլխավոր մուտքի կառույցի հիմքերի,սյուների հեծանների դասավորության սխեմա	ԵԿ-25	
26	Գլխավոր մուտքի կցակառույց , կտրվածք 4-4, մասնագիր	ԵԿ-26	
27	Նկուղային հարկի աստիճանների հատակագիծ	ԵԿ-27	
28	Պատուհանների բացվածքների փոքրքցում, ճակատ 1-10,10-1	ԵԿ-28	
29	Պատուհանների բացվածքների փոքրքցում, ճակատ Ե-Ա	ԵԿ-29	
30	Պատուհանների բացվածքների փոքրքցում, ճակատ Ա-Ե	ԵԿ-30	
31	Հակահրդեհային աստիճանների դասավորության սխեմա	ԵԿ-31	
32	Գլխավոր մուտքի հովար	ԵԿ-32	
33	Հովար Հ1, հանգույցներ, մասնագիր	ԵԿ-33	
34	Հովարներ	ԵԿ-34	
35	Աստիճանների ուժեղացում	ԵԿ-35	
36	Տանիքի հատակագիծ	ԵԿ-36	
37	Տանիքի հանգույցներ	ԵԿ-37	
38	190 մմ հաստ միջնորմների ամրանավորման և ամրացման դրվագ	ԵԿ-38	
39	90մմ միջնորմների ամրակապման սխեմա	ԵԿ-39	
40	Մետաղական ելարան	ԵԿ-40	
41	Ցանկապատ	ԵԿ-41	

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի կոնստրուկտիվ լուծումը կարկասային է, հիմնականախքն իրականացվել է ИИС-04 սերիայի հավաքովի երկաթ.բետոնե կոնստրուկցիաներով:
Կրող են հանդիսանում մասնաշենքի լայնական ուղղությամբ շրջանակները, որոնք երկայնական ուղղությամբ կապված են միմիանց հետ կապասալերի միջոցով:
Հիմքը սյուների տակ կետային են, որոնք արտաքին պարփակող պատերի տակ կապված են միմիանց հետ որմնախարսխային պանելներով:
Նկուղային հարկում հիմքերը ժապավենային են իրականացված են խամքարաբետոնով:
Հավաքովի Ե/Բ սյուները ունեն 30x30սմ լայնական հատույթ:
Կրող պարզունակները ունեն տավրածն լայնական հատույթ ներքին գոտիով 520սմ բարձրությամբ իսկ լայնությունը գոտիի նեքում 40սմ:
Կառույցի պարփակող պատերն ինքնակրող են, իրականացվել են 25սմ հաստությամբ հավաքովի Ե/Բ կախովի պանելներով, որոնք երեսապատված են տուֆաքարե սալիկներով:
Միջհարկային ծածկերը և վերնածածկը այդ թվում նաև նկուղային հարկի ծածկը իրականացվել են հավաքովի Ե/Բ բազմանցք սալերով:
Աստիճանավանդակի ներսի սանդուխքները իրականացվել են գլոցված պողպատե թեքահեծաններով և հեծաններով միաձույլ Ե/Բ հարթակներով, հավաքովի Ե/Բ հատիկավոր աստիճաններով:
Հակահրդեհային սանդուխքները իրականացվել են մետաղական կոնստրուկցիաներով:
Միջնորմները իրականացվել են պեմզաբետոնե սալերով և պեմզաբետոնե բլոկների շարվածքով:
Տանիքները լանջավոր են, արտաքին անկազմակերպ ջրահեռացմամբ փայտե ծպեղային և կավարամածային կոնստրուկցիաներով և մետաղական ալիքավոր թիթեղյա ծածկույթով:
Նախագծի կոնստրուկտորական մասը մշակված է համաձայն ճարտարապետական գծագրերի:
Ձյան նորմածիվ բեռնվածքը ծածկի վրա-50կգու/քմ
Հողի սառչելու առավելագույն խորությունը կազմում է 41 սմ
Տարածքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում
Նախագիծը կատարված է Համաձայն ՀՀՇՆ II-6.02.2006 սեյսմիկ նորմերի:

Նախագծով նախատեսված է՝
հիմքերի կապում, դիաֆրագմաների իրականացում նրանց կից սյուների ուժեղացումով մետաղական շրջակապերով:
Հակասեյսմիկ կարանի իրականացում լրացուցիչ Ե/Բ շրջանակի տեղադրմամբ: Ծածքի սալերի ուժեղացում, նոր միջնորմների կառուցում: Գոյություն ունեցող տանիքի փայտե կոնստրուկցիաների և հանգույցների մասնակի ուժեղացում:
Ներքին աստիճանների ամրացում մետաղական սանդղաբազուկների հետ: Արտաքին պատերի բացվածքների փոքրացում: Գլխավոր մուտքի կառուցում: Նոր մետաղական հակահրդեհային աստիճանների տեղադրում:
0.00 պայմանական միշը համապատասխանում է՝ 840.35 բացարձակ միշին:
Համաձայն ինժեներա-երկրաբանական եզրակացության, որպես հիմնատակ ընդունված է 3-րդ շերտը
Պայմանահաշվարկային դիմադրությունը -0.18 ՄՊա:
Հիմքերը բացելիս ինժեներ երկրաբանի ներկայությունը պարտադիր է՝ հիմնատակը պարզելու համար:
Տեղամասի գրունտային պայմանների գործակիցը ըստ սեյսմիկության սպասվող առավելագույն արագացման գործակիցը կկազմի A max= 0,44g:
Առաջնորդվելով ՀՀ ներկա գործող "Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում, հիմնական դրույթներ " ՀՀՇՆ 20-06-2014 նորմերի 31 կետի և հավելված 1-ի, ընդունելով 0,5 <Kc <0,7:
Մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի վերակառուցման նախագիծը ընդունված է "սեյսմազինվածության բարձրացում":
Նախագծով նախատեսված է հիմքերի կապում միմիանց հետ համաձայն նախագծի, Ե/Բ դիաֆրագմաների իրականացում, ծածկի սալերի ուժեղացում: Նկուղային հարկում նախատեսված են միայն դիաֆրագմաների և շրջանակի հիմքերի իրականացում:

Աշխատանքի ժամանակ օգտագործվող բոլոր նյութերը պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող ստանդարտների և նորմատիվային փաստաթղթերի պահանջներին, ինչպես նաև տվյալ ապրանքների որակի չափանիշների /սերտիֆիկատներ/ պահանջներին, որոնք մինչև կիրառումը համաձայնեցնել պատվիրատուի և նախագծային կազմակերպության հետ:

ՍՊԸ տնօրեն	Մ. Միսակյան		TAT-06 Արարատի մարզի Արարատ գյուղի մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի վերակառուցում			
ՆԳՃ	Ա. Ջանունց		Կոնստրուկտորական մաս	Փուլ	Թերթ	Թերթեր
Նախագծեց	Ն. Ավագյան			Ա.Ն.	ԵԿ-1	41
			Ընդհանուր տվյալներ	«ԱՄԱԳ» ՍՊԸ		